

ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՐՋԱՆԱԿԸ

- Մշակել, իրականացնել և մշտապես բարելավել որակի ներքին ապահովման գործընթացները, զեկուցել դրանց արդյունքների մասին
- Սահմանել որակի ներքին չափանիշներ և չափորոշիչներ՝ ընդունված եվրոպական պահանջներին համահունչ
- Մշակել մասնաճյուղի կանոնակարգային, ընթացակարգային և չափորոշիչ-փաստաթղթերը
- Համակարգել, վերահսկել, աջակցություն տրամադրել ՈԱ-գործընթացների իրականացմանը բոլոր ստորաբաժանումներում
- Մշակել ՈԱ տարեկան, կիսամյակային պլաններ և դրանց կատարման վերաբերյալ հաշվետվություններ
- Ապահովել ՈԱ գործընթացների և ընթացակարգերի թափանցիկությունը, դրանցում ուսանողների, շրջանավարտների, հիմնական գործատուների գործուն մասնակցությունը
- Կազմակերպել մասնաճյուղի ստորաբաժանումներին աշխատանքները արտաքին փորձագիտական այցերի ժամանակ
- Համագործակցել ՀՀ մասնագիտական կրթության Որակի ապահովման- ազգային կենտրոն հիմնադրամի հետ
- Առաջարկներ ներկայացնել մայր բուհ կրթական ծրագրերի մշակման համար
- Մասնակցել մայր բուհի կողմից կրթական ծրագրերի պարբերական վերանայման գործընթացներին
- Մասնակցել կրթական ծրագրերի որակի ինքնագնահատման գործընթացին, օժանդակել դրանց արտաքին գնահատման և հավատարմագրման գործընթացներին
- Մասնակցել դասավանդման, ուսումնառության և ուսանողների գնահատման ՈԱ գործիքակազմի (հարցումներ, ֆոկուս-խմբեր և այլն) մշակմանը
- Մշակել մասնաճյուղի գործունեության հիմնական ոլորտների ինքնագնահատման չափանիշները
- Նախաձեռնել և իրականացնել մասնաճյուղի կրթական գործունեության ինքնագնահատման (ինքնաուսումնասիրման) գործընթաց՝ համապատասխան զեկույցի հրապարակմամբ, որը հիմք կծառայի կրթության որակի բարձրացմանն ուղղված միջոցառումների մշակման համար:
- Ստեղծել ներքին չափանիշներ և ընթացակարգեր՝ ուսումնական ծրագրերի պահանջներին համապատասխան ռեսուրսային ապահովվածության գնահատման համար
- Պայմանագրի գործողության ընթացքում, ըստ սահմանված ժամանակացույցի, մշակել մեթոդական փաստաթղթեր
- Ուսանողական հարցումների միջոցով գնահատել ուսանողներին լրացուցիչ ծառայությունների մատուցման հնարավորությունները,
- Դասընթացների իրականացման գնահատման նպատակով կազմակերպել դասալսումներ և ուսանողական հարցումներ
- ՀՊՏՀ ԳՄ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանումների հետ համատեղ կատարել հարցումների արդյունքների վերլուծություն
- Մասնակցել ենթակառուցվածքային (ինստիտուցիոնալ) հավատարմագրման աշխատանքներին՝ ըստ մասնագիտական կրթության հավատարմագրման հաստատված չափանիշների
- Մշակել և կիրառել կրթության ոլորտի շահակիցների հետ հետադարձ կապի մեխանիզմներ

- Աշխատակիցների համար կազմակերպել կրթության որակի ապահովման ներքին համակարգի վերաբերյալ վերապատրաստումներ և աշխատաժողովներ:
- Ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի ինքնագնահատման մեխանիզմ, որը կհանգեցնի որակի բարձրացմանը,
- Ներկայացնել որակի ներքին ապահովման համակարգի աշխատանքի վերլուծության արդյունքներ, մասնավորապես SWOT վերլուծություն,
- Կազմակերպել և իրականացնել ռազմավարական ծրագրի եռամսյակային և տարեկան գործողությունների դիտարկում՝ ուսումնական գործընթացի որակի տեսանկյունից, տալ ամփոփիչ գնահատում, վեր հանել առկա խնդիրները, ինչպես նաև իրականացնել ամբողջական ռազմավարական ծրագրի արդյունավետության գնահատում,
- Պարբերաբար ուսումնասիրել որակի ապահովման միջազգային փորձը, մասնաճյուղում կիրառել հնարավոր լավագույն փորձի մոտեցումներն ու գործողությունները
- Ապահովել ներքին և արտաքին շահակիցների, ինչպես նաև արտաքին փորձագետների հետ սերտ համագործակցային հարաբերություններ, որոնք ուղղված են ուսումնական գործընթացի որակի ապահովմանը
- Ուսումնասիրել այլ համալսարանների Որակի ապահովման մեխանիզմները, դրա հիման վրա բարելավել բուհում ուսումնական գործընթացի որակի ապահովման համակարգը:
- Կատարել վերլուծություններ՝ բացահայտելու կրթական տարբեր մակարդակների մասնագիտությունների պահանջարկը շուկայում, որը կօգնի ընտրել առավել բարձր պահանջարկ ունեցող մասնագիտությունները հետագայում լիցենզավորման աշխատանքների իրականացնելիս,
- Քննարկել արտաքին փորձագիտական խմբի կողմից տրված գնահատման եզրակացությունը ներքին շահակիցների հետ և հաշվի առնելով որակի ապահովման գործընթացը խորհրդատվական աջակցություն տրամադրել վերջիններիս իրենց ստորաբաժանումների եռամսյակային, տարեկան պլանների բարելավմանը և վերանայմանը միտված գործողություններում:
- Ուսումնասիրել մասնաճյուղում նոր կրթական տեխնոլոգիաների ներդրման հնարավորությունները և մշակել ներդրման առաջարկներ:
- Պարբերաբար կազմակերպել որակի ապահովման միջոցառումներին ուղղված աշխատաժողովներ
- Առաջարկել ուսանողակենտրոն միջավայրի ձևավորմանը միտված միջոցառումներ, հետևել դրանց իրականացմանը
- Ձևավորել անհրաժեշտ նախադրյալներ և խթանող մեխանիզմներ տրամադրվող կրթության որակի շարունակական բարելավման համար
- Ստեղծել պրոֆեսորադասախոսական կազմի կարողությունների գնահատման թափանցիկ մեխանիզմներ և չափանիշներ
- Տեղայնացնել, մշակել և պարբերաբար վերանայել մասնաճյուղի կրթության որակի ապահովման կանոնակարգերը և ընթացակարգերը,
- Որակի ապահովման գործընթացներում ներգրավել մասնաճյուղի ուսանողներին և պրոֆեսորադասախոսական կազմի անդամներին,
- Կազմել, մշակել և ամփոփել դասընթացներից և կրթության որակից ուսանողների բավարարվածության աստիճանի վերաբերյալ հարցումները,
- Իրականացնել շրջանավարտների կրթության որակից բավարարվածության աստիճանի ամենամյա հարցումներ, ամփոփել և վերլուծել դրանց արդյունքները,
- Կազմակերպել որակի ապահովման սեմինարներ և ուսուցողական միջոցառումներ,
- Կազմակերպել, իրականացնել և ամփոփել պրոֆեսորադասախոսական կազմի անդամների գործունեության գնահատման աշխատանքները: